

ները կամ սոսկ տպարանների ժամանակա-
գրական թուղթերը են եւ կամ ծանրա-
բեռնուած են յարակից քաղաքական-հասա-
րակական դէպքերի եւ դէմքերի այնպիսի
ճոխ տեղեկութիւններով, որ բուն նիւթը՝
տպագրութիւնը, որպէս այդպիսին, դարձել
է այնտեղ երկրորդական, աննշան: Եւ յի-
շուստ, հեղինակը հինգ գլուխներու մէջ յո-
րինուածական շարքով կը յիշատակէ Հայ
Գիրքը՝ նախ քան տպագրութիւն, տպագրու-
թեան սկիզբը, ծաւալումը, վերելքը, ծաղ-
կումը: Կը խօսի անոր թեքնիք զարգացման,
զեղարուեստական ձեւաւորման, փայտագիր
եւ վիճագիր նկարներու արուեստին, թղթի,
չափերէնքու եւ կազմերու յատկութեան եւ
տեսակներու, ինչպէս նաեւ հայկական ճու-
լարաններու եւ տպագրական տառերու աս-
տիճաններուն մասին:

Հատորի սկիզբէն մինչեւ էջ 36 հեղի-
նակը մանրամասնօրէն կը ծանրանայ հայե-
րէն ձեռագիրներու վրայ (Ե.—ԺԶ. դարեր):
Կը խօսի մանրագիտօրէն գրչութեան ա-
րուեստին, տեսակներուն, դժուարութեանց
շուրջ. յետոյ մանրակարգութեան, նկարա-
զարդման արուեստին եւ յիշատակարաննե-
րու մասին, միշտ յառաջ բերելով օրինակ-
ներ, եւ ի վերջոյ կը ներկայացնէ գեղա-
րուեստական արժէք ունեցող ձեռագիրներու
շարք մը, որոնց նկարազարդման նշանաւոր
կենդանիներու՝ արեւելեան Հայաստանի հա-
մար՝ Տաթև, Գլաճոր, Հաղբատ եւ այլն,
իսկ արեւմտեան Հայաստանի կամ Կիլիկիոյ
համար՝ Կարմիր Վանք, Սկեւոս, Հոռմկլայ,
Դրազարկ եւ այլ վանքերու եւ այս դպրոց-
ներու նշանաւոր մանրակարիչ վարպետնե-
րու դասաւորումը ընելէ վերջ կու տայ
նմոյշներ անոնց գործերէն, ցոյց տալով
միանգամայն այս հագուազիւտ նշխարներու
պահուած ներկայ վայրերը:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ուղարկուած Խմբագրութեանս):

Ազգային բացառիկ: Պէյրութ 1957, 4⁰, էջ
129 (Հրտի. Հ. Յ. Գ. Չաւարեան Ուս.
Միութեան):

Այլվագեան Պաղտ., Համեստ տուրք մը Հայ
նկարչական արուեստի գանձարանին:

Բ. Գլուխէն (էջ 37) ընթերցողին առջեւ
կը պարզուի Հայ Տպագրութեան պատմու-
թիւնը սկիզբէն, այսինքն ԺԶ. դարէն սկսեալ:
Հեղինակը ժամանակի քաղաքական դրու-
թեան վրայ հպանցիկ ակնարկ մը կը նետէ
եւ սփիւռքի Հայ Գաղթականութեանց ընդ-
հանուր վիճակին անդրադառնալէ յետոյ
կ'անցնի Վենետիկ, ուր «1512 թուականին
տեղի է ունենում մի նշանաւոր դէպք՝ լոյս
է տեսնում առաջին հայերէն տպագրուած
գիրքը»:

Մեղապարտ Յակոբի կողմէ տպա-
գրուած ծանօթ հինգ գրքերու՝ Պարզատու-
մարի, Պատարագատետրի, Ուրբաթագրքի,
Աղթարքի եւ Տաղարանի մասին մանրամաս-
նօրէն խօսելէ վերջ հեղինակը իր դործին
Գ.—Ե. գլուխներու մէջ (ԺԷ.—ԺԹ. դա-
րեր) կը նկարագրէ գաղթաշխարհի մէջ Հայ
տպագրութեան ծաւալումը, վերելքն ու
ծաղկումը: Մասնաւոր կերպով կը ծանրա-
նայ Վիեննայի Միթթարեան Միաբանու-
թեան տպագրական գործունէութեան վրայ,
զոր կը վերջացնէ խորհրդածութիւններովս:

«Վիեննայի Միթթարեան տպարանի մա-
սին այսքան երկար կանգ առանք, որովհե-
տեւ նա արժանի էր դրան: 1906 թուին եւ
1913 թուին Աւստրիայի մայրաքաղաքում
մեր եղած միջոցներին քանիցս այցելել ենք
այդ հոյակապ հաստատութիւնը, անձամբ
համոզուել, որ իրօք նա իր մեծութեամբ
եւ հարստութեամբ հայկական տպարանների
մէջ առաջինն է եւ անմրցակից»:

Ջերմապէս կը յանձնարարենք ընթեր-
ցաւէր հանրութեան ներկայ երկասիրու-
թիւնս, որուն ընթերցումը հաճելի պիտի ըլ-
լայ թէ գիտունին եւ թէ գրասէր անհատին:

Հ. Գր. ԱՅԱՆՆԱՆ

Պուէնոս Այրէս 1957, 8⁰, էջ 96: Տպ.
Հայ Մամուլ:

Առաքելեան վարագ, Հայերէնի շարագասու-
թիւն: Հտ. Ա.: Երեւան 1958, 8⁰, էջ
503 (ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն):

Առաքելեան Բաբկէն, Քաղաքները եւ ար-
հեստները Հայաստանում Թ.—ԺԳ. դ.:
Երեւան 1958, 4⁰, էջ 376 + 76 տխ.
(ՀՍՍՌ ԳԱ Հրտի.):

Աստուրեան Դիտ. Յ., Պատմութիւն Հայոց:
Պուէնոս Այրէս 1947, տպ. Սիփան, 8⁰,
էջ ԺԷ + 563:

Ավդալբեգեան Մ. Թ., Խաչատուր Կեչա-
ռեցի, ԺԳ.—ԺԴ. դ.: Երեւան 1958, 8⁰,
էջ 220 (ՀՍՍՌ ԳԱ Հրտի.):

Արմէն Հրանդ Բ., Պապ Արշակունի: Երու-
սաղէմ 1958, 8⁰, էջ 318:

Բամբեր Մատենադարանի Թիւ 4: Երեւան
1958, ՀՍՍՌ. Գիտ. Ակադ. Հրտի., 8⁰,
էջ 438:

Գեղարդ Յ., Լիբանանի Համանուաղ: Պէյ-
րութ 1957, 8⁰, էջ 68:

Գրիգորեան Մեսրոպ վրդ., Մտեհանոս Սիւ-
նեցի: Պէյրութ 1958, տպ. Սեւան, 8⁰,
էջ 79:

Գրիգորեան Վ. Ռ., Երեւանի խանութները
18րդ դարի վերջում (1780—1800): Երե-
ւան 1958, ՀՍՍՌ ԳԱ Հրատարակչու-
թիւն, 8⁰, էջ 228:

Գրպանի օրացոյց Արաքս Մատենադարի
ԺԸ տարի: Աղեքսանդրիա, տպ. Ստե-
փանեան, 1958, 32⁰, էջ 142:

Դաշտեցի Խաչիկ, Խողեղան: Գահիրէ 1958,
Յուսարեւ, 8⁰, էջ 486:

Դրօշակ, Հ. Յ. Դաշն. Օրդան 1898—1901.
Բ. Հատոր: Գահիրէ, տպ. Յուսարեւ:

Եագուպեան Պերն եւ Սօնիա, Կ'ըսէր. Լիպա-
րիտ Նազարեանց՝ զանազան երկեր: Գա-
հիրէ, տպ. Յուսարեւ (1957⁰), 8⁰,
էջ 112:

Եղնիկ — Եղծ Աղանդոց (աշխարհաբար
թարգմանութեամբ): Թրգմ. եւ Հրտի.
Գ. Ե. Տ.: Պուէնոս Այրէս, տպ. Արա-
րատ 1951, 8⁰, էջ 148:

Երեմեան Արամ — Յակոբ Գույումճեան եւ
իր գրականութիւնը: Պոստըն 1958, 8⁰,
էջ 77:

Զօհրապ Գր., Կեանքը ինչպէս որ է: Պէյ-
րութ 1959, տպ. Տօնիկեան, 8⁰, էջ 120:

Զօհրապեան Հ. Կիւրեղ, Ս. Պատարագ. Չայ-
նադրութեամբ... ըստ աւանդական եղա-
նակաց Կարնոյ քաղաքի: Վենետիկ, Ս.
Հաղար 1958, 4⁰, էջ 110:

Թերգեան Մեսրոպ Վ., Խոստովանողի մը
նամականին: Պէյրութ 1958, տպ. Լա
Ֆոթոյ-Բրէս, 8⁰, էջ 86:

Լեւոնեան Գարեգին, Հայ գիրքը եւ տպա-
գրութեան արվեստը. պոմկն. տեսու-
թիւն: Երեւան 1958, Հայպետհրատ, 8⁰,
էջ 254:

Խաչիկեան Լ. Ս., Ժե դարի հայերէն Չեռա-
գրերի Յիշատակարաններ. Մասն Բ
(1451—1480 թթ.): Երեւան 1958, 8⁰,
էջ 600 (ՀՍՍՌ ԳԱ Հրտի.):

Մաղկեմունջ բարոյալից պատմութեանը.
Է: Պէյրութ 1958, 8⁰, էջ 48 (Մատենադար
«Ձահ» թիւ 7. Հրտի. «Նուպար» Գրա-
տան):

Կէօթէ Ե. Վ. Ֆ., Ֆուսուս, Ա. եւ Բ. Մաս:
Թրգմ. Սամանճեան Արամ: Ստամպուլ,
1958, տպ. Հերմոն, 8⁰, էջ ԺԶ + 566:

Կոմիկեան Վարդան, Բարերար սէր. պա-
տուածքներ: Ստամպուլ 1958, տպ. Վա-
րօլ, 8⁰, էջ 240: (Հրտի. Արամեան Սա-
նուց Միութեան, Մատենադար Թ. 2):

Կիլիկեան Բաբկէն Կաթողիկոս, Յուցակ
ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր Վանուց
եւ չրջակայից: Անթիլիաս 1957, 8⁰, էջ
ԺԳ + 1518:

Համայնապատկեր Հանրապետական չրջանի
Խաթանպուլահայ գրականութեան: Հրտի.
Արամեան Սանուց Միութեան. Սթան-
պուլ 1957, տպ. Վարօլ, 8⁰, էջ 340:

Հայաստանեայց Առաքել. Ս. Եկեղեցւոյ Սահ-
մանագրութեան Նախագիծ (Արտատպ.
Էջմիածին ամսագրի 1958, թիւ ԺԲ):
Էջմիածին 1958, 8⁰, էջ 16:

Ղարիբեան Ա. Ս., Հայերէնի նորահայտ
բարբառների մի նոր խումբ: Երեւան
ՀՍՍՌ Գիտ. Ակ. Հրատ. Երեւան 1958,
8⁰, էջ 194:

Ղաֆանդարեան Կ., Սանահնի վանքը եւ
նրա արձանագրութիւնները: Երեւան
1957, ՀՍՍՌ. Ակադ. Հրտի. 4⁰, էջ 209:

— — — Հովհաննավանքը եւ նրա արձանագրու-